



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Անգլերեն բանավոր խոսքի ուսուցումը միջին դասարաններում
ԱՌԱՐԿԱ	Անգլերեն
ՀԵՂԻՆԱԿ	Թաղևոսյան Երանյակ
ՄԱՐԶ	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ	
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	<<ՀՀ Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
ՂԵԿԱՎԱՐ	Մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր՝ Ա. Ծատուրյան

Ստեփանավան 2022

Բովանդակություն

Բանավոր խոսքի հոգեբանական և լեզվաբանական առանձնահատկությունները

Բառապաշարի ուսուցումը որպես խոսքային հմտությունների ձևավորման նախապայման

Քերականության ուսուցումը որպես խոսքային հմտությունների ձևավորման նախապայման

Մենախոսության ուսուցում

Երկխոսության ուսուցում

Եզրակացություն

Ներածություն

Օտար լեզվի իմացությունը նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները ,խոսքն ու մտածողությունը :Այդ պատճառով էլ օտար լեզվի (կամ լեզուների) դասավանդումը հանրակրթական դպրոցում խիստ կարևորվում է:Նշելով ,որ օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցական կարողությունների զարգացմանը ,միջմշակութային փոխըմբռնմանը ,այլ մշակույթների ու արժեքների ընկալմանը ու գնահատմանը բնության ու ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքներ ստանալուն ,գեղագիտական ,բարոյական ,պահպանմանը և փոխանցմանը միջնակարգ կրթության չափորոշիչը սահմանում է հանրակրթական դպրոցում օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակը այն է՝ ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները :

Բանավոր խոսքի հոգեբանական և լեզվաբանական առանձնահատկությունները

Ինչպես հայտնի է լեզուն մի կուռ ,ամբողջական ու անընդատ զարգացող համակարգ է , իսկ խոսքը, այդ համակարգի օրինաչափությունների հիման վրա ծավալվող գործունեություն :Լեզվի համակարգն ունի իր միավորները,հնչյուն, ձևույթ, բառ, բառակապակցություն, նախադասություն և այլն, իսկ նախադասությունը նաև խոսքի միավոր է ,այն էլ նվազագույն :Նախադասության նման հատկանիշը ` մի կողմից լեզվի , մյուս կողմից ` խոսքի միավոր լինելը ,օտար լեզուների ուսուցման առջև խիստ կարևոր խնդիր է դնում :Օտար լեզուների ուսուցման խնդիրներն առավել նպատակասլաց լուծելու համար անհրաժեշտ է տարբերակել լեզվի միավոր նախադասությունը խոսքի միավորից : Մեթոդական գրականության մեջ ընդգծվում են խոսքի հոգեբանական հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

1.շարժառիթը

2.իրադրական պայմանավորվածություն

3.ուղղվածություն

1. Մարդը խոսում է որոշակի պահանջով ,ներքին անհրաժեշտությունից դրդված:Շարժառիթը մարդու արտահայտվելու խթանն է, մղիչը, առանց որի մարդը ոչ միայն խոսքային գործունեություն , այլև ընդհանրապես որևէ գործունեություն չի ծավալում :Հետևաբար, երբ ուզում ենք, որ աշակերտը խոսի , պետք է ապահովել նրա խոսքի խթանը, բնական կամ արհեստական եղանակով խոսելու ներքին պահանջ ու անհրաժեշտություն առաջացնել նրա մեջ:

2.Մարդկայինը խոսքը իրադրական է:Մարդու խոսքն անքակտելի կերպով կապված է իրադրության հետ, այն պարզ ու հասկանալի տվյալ իրադրության մեջ:Որպեսզի յուրաքանչյուր նախադասություն հաղորդի որոշակի ինֆորմացիա, ունենա հաղորդակցական արժեք, պետք է վերաբերվի որոշակի իրադրության :Վերցնենք «Ձանգը հնչեց» նախադասությունը և օգտագործենք այն ` վերաբերելով տարբեր բարդությունների.

ա.Դպրոց, ուսուցչանոց: Ժամը 09:00 հնչում է զանգը: Ուսմասվարը մտնում է ուսուցչանոց և ասում. «Ձանգը հնչեց» :Նշանակում է ` սկսել դասը:

բ. Դպրոց:Դասարան:Ժամը 09:45 հնչում է զանգը :Չարաճճի աշակերտներից մեկը ասում է. «Ձանգը հնչեց» :Նշանակում է ` ավարտել դասը: Լեզվական տեսակետից նույն զանգը հնչեց նախադասությունը , վերաբերելով տարբեր իրողությունների , արտահայտում է հակառակ իմաստ:Խոսքի խթանող իրադրություններ ստեղծելիս անհրաժեշտ է հաշվի առնել լեզվական նյութը,աշակերտի տարիքը,զարգացման աստիճանը և այլն : Աշակերտին արտահայտվելիս հաղթահարում է 2 դժվարություն . 1.Ի՞նչ ասել 2. Ինչպե՞ս ասել : Երբ իրադրությունն ընկալվում է

տեսողական զգայարանով , աշակերտն ազատվում է ի՞նչ ասել խնդրից , իրադրության պայմանները մտապահելու դժվարությունից և ուշադրությունը կենտրոնացում է 2րդ կողմի՝ մտքի լեզվական ձևավորման վրա,որը հանդիսանում է օտար լեզվի ուսուցման հիմնական խնդիրներից մեկը :

Իրադրություններ ստեղծելու լավագույն միջոցներից է խաղը : Ուսուցիչն ասում է տարվա առաջին ամսվա անունը և գնդակը նետում աշակերտներից մեկին, որն ասում է հաջորդ ամսվա անունը և գնդակը նետում 3րդ աշակերտին :Մխավոդը դուրս է գալիս խաղից :Խիստ արդյունավետ են listen, ask and answer կամ read , ask and answer տիպի վարժությունները :Երբ աշակերտը մարզումներ է կատարում լսածը կամ կարդացածը հասկանալու , հասկացածի հիման վրա մենախոսական կամ երկխոսական ունակությունները զարգացնելու համար :

3. Երբ ըստ իրադրության մարդու գիտակցության մեջ ծնվում է միտքը , որոշակի է դառնում ոչ միայն այն , թե ինչն ինչու՞ է ասելու ,այլ նաև՝ թե ու՞մ է ասելու , ու՞մ է ուղղված խոսքը :Մարդը միևնույն ձևով չի խոսում իր հոր,հասակակցի, ավագ ու կրտսեր գործընկերոջ հետ: Նույնիսկ միայնության մեջ խոսելիս մարդու խոսքն ուղղված է ինչոր մենակ կամ հենց իրեն:Երբ ուսուցման մեջ չի ապահովվում աշակերտի խոսքի ուղղվածությունը , նա չի իմանում ու՞մ և ու՞ր նայի . մերթ՝ նայում է առաստաղին , մերթ՝ հատակին , մերթ՝ պատուհանից դուրս: Ուրեմն , երբ աշակերտի առաջ խոսելու խնդիր է դրվում , անհրաժեշտ է ապահովել նրա խոսքի ուղղվածությունը :

Օրինակ .

Ask your friend... Tell the class...

Explain to your father... Tell me...

Խոսքային գործունեության հոգեբանական և լեզվաբանական վերոհիշյալ պահանջների իրականացումը օտար լեզվի ուսուցումը մոտեցնում է հաղորդակցման բնական պայմաններին և ստեղծում է խոսքային հմտությունների ձևավորման արդյունավետ պայմաններ:

**ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Դպրոցական բառապաշարի յուրացումը օտար լեզուների ուսուցման հաղորդակցական նպատակի իրականացման կարևոր նախապայմաններից է: Աշակերտը մի կողմից պետք է սովորի և հիշողության մեջ պահի լեզվական նյութը՝ արտասանական, բառարանային, քերականական, իսկ մյուս կողմից՝ ձեռք բերի դրանից օգտվելու հմտություններ՝ գրավոր և բանավոր ինֆորմացիա հաղորդելու և ընդունելու նպատակով:

Ուսուցման ընթացքում բառարանի վրա աշխատելու առաջին իսկ քայլից անհրաժեշտ է այնպես կազմակերպել աշխատանքը, որ աշակերտը, քայլ առ քայլ հաղթահարելով նյութի հետ կապված տարբեր բնույթի դժվարությունները, կարողանա այն օգտագործել խոսքային գործունեության տարբեր տեսակներում:

Հայտնի է, որ բառարանի վրա տարվող ընդհանուր աշխատանքն անցնում է մի քանի փուլեր.

1. Ներմուծում
2. Ամրապնդում աշակերտի հիշողության մեջ՝ վարժությունների հատուկ համակարգի միջոցով:
3. Օգտագործում խոսքային գործունեության տարբեր տեսակներում:

Բառարանի միավորների վրա «պետք է աշխատել և առանձին և՛ կոնտեքստում: Ուսուցման բոլոր աստիճաններում առանձին բառի յուրացման աշխատանքի կարևորագույն խնդիրը կոնտեքստում նրա օգտագործման նախապատրաստումն է, իսկ բարձր աստիճանում աշակերտի լեզվական ընդհանուր գիտելիքների ընդլայնումը, որի հիման վրա նաև՝ լեզվամտածողության զարգացումը:

Բառապաշարի ներմուծման ուղղությամբ տարվող աշխատանքն ընդգրկում է երեք կարևոր օղակներ՝ բառի ձևը, նշանակությունը և օգտագործումը: Այս բաժանումը, անշուշտ, պայմանական է, քանի որ բառը կենդանի է միայն վերոհիշյալ երեք օղակների միասնության մեջ: Ուստի աշակերտի գիտակցության մեջ այդ միասնության ստեղծումը բառապաշարի ուսուցման կարևոր խնդիրն է:

Բառի ձև ասելով նկատի է առնվում տվյալ լեզվական միավորի արտասանությունը, գրությունը, կառուցվածքը և քերականական ձևը:


Բանավոր խոսքի զարգացման առումով բառի արտասանությունը ճիշտ լսելն ու վերարտադրելը բառարանային անհրաժեշտ ունակություն է: Բառերի արտասանության խեղաթյուրումը կարող է արգելակել հաղորդակցումը, հետևաբար դրանց ճիշտ արտասանությունը, որպես բանավոր խոսքի կարևոր նախապայման, երբեք չպետք է վրիպի ուսուցչի ուշադրությունից: Այս դժվարությունը հիմնականում հաղթահարվում իմիտացիոն, վերարտադրողական

վարժությունների միջոցով: Յուրադրումն ու գործնական բացատրությունները իմիտացիան ավելի արդյունավետ են դարձնում:

Բառի օգտագործման առանձնահատկությունները ցույց տալու համար, անհրաժեշտ է հաշվի առնել դրանց իմաստային ծավալների համապատասխանությունն ու անհամապատասխանությունը մայրենի և օտար լեզուներում, որոնց հիման վրա էլ աշակերտներին՝ ցույց տալ նրանց օգտագործման ոլորտները՝ դպրոցական ծրագրի պահանջների սահմաններում:

Նոր բառերի ներմուծման օղակները եթե պատկերացնենք սխեմայի ձևով, այն կունենա հետևյալ պատկերը.

ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ



պատկերի ցուցադրում
գ. միմիկա, ժեստ

բ. միկրո-կոնտեքստ
գ. հոմանիշներով
դ. հականիշներով

ե. բառի բացատրություն

Վերոհիշյալ սխեմայից պարզ երևում է, որ լեզվական նյութի նշանակության բացահայտման եղանակները բազմազան են, ձևի և օգտագործման օղակները ունեն մի շարք խնդիրներ:

Ուսուցչի գործունեությունն սկսվում է լեզվական նյութի մանրակրկիտ ուսումնասիրումով: Այդ ուսումնասիրությունը ուսուցչին հնարավորություն կտա ճիշտ ընտրելու ուսուցման եղանակները. օրինակ բառերն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել բառիմաստի կոնկրետ կամ վերացական լինելը ուղիղ կամ փոխաբերական իմաստով օգտագործվելը, քանի որ բառի այսպիսի առանձնահատկությունները ևս որոշում են նշանակության բացահայտման եղանակը: Իսկ բառի արտասանությամբ, գրությամբ և կառուցվածքի առանձնահատկություններով կանխորոշվում են ուսուցչի գործունեության ոլորտները, կանխագծվում հաղթահարման եղանակները:

Հաջորդ աստիճանը լեզվական նյութի նշանակության բացահայտումն է, որի համար ընտրվում է համապատասխան եղանակ: Հատկապես, երբ նշանակությունը բացահայտվում է ոչ թե թարգմանական եղանակով, ուսուցիչը նոր նյութն օգտագործում է նախադասությունների մեջ: Այս աստիճանում պետք է հոգ տանել, որ պահպանվի մեկ անձանոթի սկզբունքը, այսինքն ուսուցչի օգտագործած նախադասություններում միակ անձանոթը լինի նոր բառը կամ քերականական երևույթը: Այս սկզբունքի պահպանումով բարերար պայմաններ են ստեղծվում աշակերտների մեջ կռահելու ունակություն զարգացնելու համար, մի բան, որ ուսուցման կարևոր խնդիրներից է: Այնուհետև ուսուցիչը՝ պետք է հոգ տանի, որ բացահայտումը երկար ժամանակ չխլի, և ապահովվի նշանակության ճիշտ ընկալումը: Հաջորդ քայլով ուսուցիչը տարբեր եղանակներով պետք է ստուգի, թե աշակերտը հասկացե՞լ է տվյալ միավորի նշանակությունը: Այնուհետև ուսուցիչը պետք է կոնտեքստից առանձնացնի միավորը և աշակերտներին (խմբով և առանձին) արտասանել տա այն: Եթե բառը արտասանական դժվարություն է ներկայացնում, ուսուցիչը տալիս է համապատասխան՝ բացատրություն և ցուցումներ:

Հատկապես այն դեպքում, երբ արտասանության և գրության միջև անհամապատասխանությունը մեծ է, ուսուցիչը հատուկ ուշադրություն պետք է դարձնի ճիշտ կարդալու վրա, մանավանդ, որ նոր բառի արտասանությունը յուրացնելուց հետո, կարդալիս տեղի է ունենում արտասանական ունակության կորուստ: Հետևաբար աշակերտները խմբով և առանձին մի քանի անգամ կարդում են նոր բառը:

Ուսուցման պրոցեսում աշակերտի բառապաշարը հաջորդաբար հարստանում է ածանցավոր և բարդ բառերով, Երբ աշակերտները բավարար քանակությամբ միավորներ յուրացնում, ուսուցչի գործունեության կարևորագույն խնդիրներից է դառնում այդ բառերի համակարգումը տախտակների կամ աղյուսակների ձևով: Այդ համակարգման նպատակը պետք է լինի յուրացված լեզվական միավորների հիման վրա ածանցների ընդգծումը, նրանց նշանակության բացահայտումը և հետագա գործունեության ընթացքում նմանատիպ նոր բառերի նշանակության կրահումը, արդեն ծանոթ բաղկացուցիչների հիման վրա:

Օրինակ՝ n+y կառուցվածքային մոդելի ցուցադրումը: rainy, windy, snowy, cloudy. sunny, stony y- ածականակերտ վերջածանցի նշանակությունը պետք է հասկանալի դառնա աշակերտին այս տախտակի վերլուծությամբ և ընդհանրացմամբ, որը և աշակերտին հնարավորություն կտա հետագա գործունեության ընթացքում, առանց մեծ դժվարության հասկանալու rocky. sandy, foggy և նման այլ բառեր:

Ինչպես տեսանք, նոր բառերի նշանակության բացահայտման համար կիրառվում են զանազան եղանակներ, որոնք զուգակցվում են դիդակտիկայի այնպիսի սկզբունքներով ինչպիսիք են՝ գիտակցականություն, գնականություն, մատչելիություն, ժամանակի արդյունավետ օգտագործում և այլն:

Ուսուցիչը, օգտագործելով վերոհիշյալ սկզբունքները, և բառերը նշանակության բացահայտման համապատասխան եղանակը, չի կարող խուսափել նոր բառ ընդգրկող նախադասությունների օգտագործումից:

Նախադասությունը, որպեսզի լինի խոսքի միավոր, պետք է բավարարի առնվազն երկու պահանջի՝ իրադրական պայմանավորվածության և խոսքային ուղղվածության:

Օրինակ. ուսուցչի խնդիրն է բացատրել անգլերեն uncle բառի նշանակությունը և կատարել նախնական ամրապնդում:

Արդյունավետ կլինեք այդ խնդիրը լուծել անգլերեն գրուցելով աշակերտի հետ՝ հենվելով նրանց կենսափորձի վրա: Այսպես օրինակ՝

T. Have you a father?

P. Yes. I have.

T. Has your father a brother?

P. Yes, he has.

T. What is his name

P. His name is Aram

T. Aram Is your **uncle**.

Այս աստիճանում աշակերտներն անմիջապես տալիս են անգլերեն բառի հայերեն համարժեքը՝ ապացուցելով, որ հասկացել են նրա նշանակությունը:

Ուսուցիչը շարունակում է զրույցը՝ դիմելով մի լավ սովորողի:

I. Have you an uncle?

P. Yes, I have.)

T. What is your uncle's name?

P. My uncle's name is Ashot.

T. How old is your uncle?

P. He is forty.

T. What is your uncle?

P. He is a worker.

Այս զրույցից հետո ուսուցիչն առաջարկում է դասարանին.

T. I think all of you have uncles. I know nothing about them. Now give me three or four sentences about your uncles.

P. I have an uncle. His name is Vartan. My uncle is 35 years old. He is a doctor.

Յուրաքանչյուր աշակերտ խոսում է իր հորեղբոր մասին: Այս աշխատանքի հիմնական նպատակը նոր բառի նշանակության բացահայտումն ու ստուգումը, ճիշտ արտասանության յուրացումը և աշակերտի հիշողություն մեջ ամրապնդումն է:

Մարդ անկախ ազգությունից և լեզվից, իր պրոդուկտիվ խոսքային գործունեության ընթացքում, երբեք չի գնում բառ-ից դեպի նախադասությունը: Մարդիկ երբ բանավոր հաղորդակցվում են միմյանց հետ, ոչ մեկը նախադասություն չի կազմում հանուն մեկ բառի օգտագործման, այլ այդ բառերն ընտրում, առանձնացնում է հիշողության մեջ՝ հանուն մտքի արտահայտման: Ուրեմն սովորողներին պետք է ուսուցել նախադասություններ կազմել ըստ մտածողության և նրա արտաշփայտման՝ բնական ընթացքի:

Պրոդուկտիվ խոսքի զարգացման համար ուսուցիչը, կիրառելով զանազան եղանակներ ու միջոցներ, աշակերտի գիտակցության մեջ պետք է առաջացնի այն միտքը, որի արտահայտումը պահանջում է տվյալ բառը կամ բառերը:

Օրինակ. անհրաժեշտ է, որ աշակերտները նախադասությունների մեջ օգտագործեն a watch, a clock a han a figure բառերը: Նախադասություն կազմել տվյալ բառ խնդրի փոխարեն, շատ ավելի արդյունավետ են հետևյալ տիպի վարժությունները,

T. Tell me what you do if you want to know time..

P. I look at a watch or at a clock.

T. What can you see on the face of a clock?

P, I can see two hands and figures.

Այս եղանակով աշխատելիս առաջադրված միտքն արտահայտելու անհրաժեշտության թելադրանքով աշակերտի մեջ այդ բառերի օգտագործման ներքին պահանջ է ծնվում, որը և ապահովում է ընկալման բարձր աստիճան:

Ուրեմն բառարանային հմտություններ ձևավորելիս որքան շատ են մտքի թելադրանքով ընտրված բառերով կազմված նախադասությունները, այնքան կայուն ու հուսալի է բանա վոր խոսքի հմտությունների ձևավորման համար անհրաժեշտ բառապաշարը:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Ուսուցվող լեզվի քերականական մեխանիզմներին ավտոմատ կերպով տիրապետելը խոսքային գործունեություն ծավալելու կարևոր նախապայմաններից մեկն է:

Անգլերեն խոսելիս մեր աշակերտները դժվարությունների են հանդիպում նաև նրա համար, որ չեն կարողանում քերականորեն և ճիշտ կառուցել բառ կապակցություններն ու նախադասությունները: Հայերենի անգլերենի քերականական կառուցվածքի տարբերությունը նույնպես լուրջ դժվարություններ է ստեղծում, ընդգծելու քերականական ավտոմատ կարողությունների ձևավորման անհրաժեշտությունը:

Որպեսզի աշակերտն ազատվի մայրենի լեզվի բա ցասական ազդեցությունից, հատուկ վարժությունների միջոցով անհրաժեշտ է ստեղծել նոր քերականական կարողություններ՝ ըստ ուսուցվող լեզվի օրինաչափությունների:

Օրինակ, անգլերեն տարբեր տիպի հարցական նախադասություններ ճիշտ կառուցելու համար հայ աշակերտը պետք է ազատվի մայրենի լեզվի

քերականական ավտոմատացած կարողության ազդեցությունից: Քանի որ անգլերենում հարցական նախադասությունների կառուցման մեխանիզմը տարբերվում է հայերենից: Դիտումները ցույց են տվել, որ հայ աշակերտներն անգլերեն հարցական նախադասությունները կազմում են հետևյալ կերպ.

You play football in the yard?

Where he went yesterday?

Այս և նման բազմաթիվ այլ նախադասություններ արտաբերվում են հայերենի հնչերանգով: Կարծես թե աշակերտն անգլերեն բառերով հայերեն է խոսում:

Վերցնենք Past Indefinite ժամանակի ուսուցումը և նրա հիման վրա ցույց տանք քերականական կարողության ձևավորման էտապները: Քանի որ կանոնավոր բայերն ունեն կազմության ընդհանուր օրինաչափություն, անցյալ ժամանակի ուսուցումն սկսում ենք այդ բայերից:

Ներմուծումն իրականացնելու համար՝ ուսուցիչը նախապատրաստում է հատուկ կոնտեքստ կամ օրինակներ, որոնց միջոցով ցույց է տալիս աշակերտներին անցյալ ժամանակի օգտագործումը: Բերված օրինակները պետք է վերաբերվեն աշակերտի առօրյային: Ուսուցիչը հայտնում է դասարանին, որ նրանք պետք է սովորեն անգլերեն խոսել անցյալում կատարված գործողությունների մասին: Մինչ այդ աշակերտները պետք է իմանան last, yesterday բառերը:

Ուսուցիչը հանձնարարում է դասարանին ուշադիր լսել իրեն և նկատել զույգ նախադասությունների մեջ բայերի ժամանակային տարբերությունը:

T. Aram plays football every Saturday

Aram played football last Saturday.

play —played

class: play-played

T. I open the window of my room every day. I opened the window of my room yesterday.

open-opened

class:open-opened

Այնուհետև ուսուցիչն ստուգում է հասկանալու աստիճանը: Նա հանձնարարում է աշակերտներին ձեռք բարձրացնել անցյալ գործողություն արտահայտող նախադասություն լսելիս:

T. Many people live in London .

We **lived** in London last year.

Նույն ձևով ներմուծվում և ստուգվում են ուսուցման ենթակա անկանոն բայերը:

Քանի որ իմիտացիան կարողության ձևավորման անհրաժեշտ պայմաններից է, ապա աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ կատարում են մի շարք իմիտացիոն վարժություններ:

Ասացեք, որ դուք էլ կատարեցիք նույնը:

T. Yesterday I worked in the orchard.

Class: We worked in the orchard, too.

T. Ashot planted many trees in the park.

Class: We planted many trees, too..

T. Lily_dressed her little sister in the morning.

P,. I dressed my little sister in the morning, too.

T. Anoush dusted the desks yesterday.

P. I dusted the desks, too.

Աշակերտներն իմիտացիա են կատարում և խմբով,և առանձին:

Նույն եղանակով ներմուծվում են հարցական ու ժխտական ձևերը և կատարվում իմիտացիոն վարժություններ:

Նման վարժություններն ակտիվացնում են աշակերտների մտածողությունը, նրանք բոլորն էլ ցանկանում են հարցեր տալ, պատասխանել: Նրանք խոսում են էլնելով իրենց կենսափորձից, առանց երկյուղելու, որ կսխալվեն, իսկ սխալվելու դեպքում աշխատում են իրենք ուղղել իրենց սխալները

Վերոհիշյալ տիպի վարժությունների սիստեմատիկ և բարեխիղճ կատարումը աշակերտին մոտեցնում է ընդհուպ մինչև մենախոսության և երկխոսության:

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Միջնակարգ դպրոցում բանավոր խոսքի ուսուցման հիմնական խնդիրը ծրագրի պահանջների սահմաններում մտքերը, բանավոր արտահայտելու և ուրիշի բանավոր խոսքը լսել- հասկանալու հմտությունների ձևավորումն է:

Եթե բանավոր խոսքի բաղադրիչների հարաբերությունը ներկայացնենք սխեմայի ձևով, այն կունենա հետևյալ տեսքը:

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔ



մտքերը բանավոր արտահայտել



լսել-հասկանալ



մենախոսություն



երկխոսություն

Երկխոսության հետ համեմատած՝ մենախոսությունն ավելի ծավալուն, մանրամասն ու անկաշկանդ է. խոսողը մտադիր է արտահայտել որոշակի միտք, որի համար ընտրում է համապատասխան լեզվական նյութն ու ձևը, որի հիման վրա կառուցում է իր մտքի արտահայտման տրամաբանությունը: Մենախոսությունը խիստ կազմակերպված է. խոսողը պլանավորում է իր ամբողջ խոսքը, նա ոչ միայն հիշում է այն, այլև արտահայտում պլանի կամ կոնսպեկտի ձևով: Մենախոսության կարևոր խնդիրներից է մտքի տրամաբանական զարգացումն ու ավարտը: Խոսողը ներկայացնում է իր պատկերացումները, տեսակետը, վերաբերմունքը, կատարում է դատողություններ և եզրակացություններ: Կարևոր նշանակություն ունեն նաև խոսքի արագությունը, տրամաբանական դադարները, ժեստը, միմիկան և այլն:

Ըստ մենախոսության ծրագրային պահանջների, դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա իր մտքերն արտահայտել դպրոցական թեմաների սահմաններում, նկարագրել, հաղորդագրություն անել, կատարել դատողություններ և եզրակացություններ, ցույց տալ իր վերաբերմունքը երևույթների և փաստերի նկատմամբ, իր խոսքում ապահովելով մտքի տրամաբանական զարգացումն ու ավարտը:

Նախադասություններն ընդարձակելու և համառոտելու վարժությունները պետք է կատարել հենց այն աստիճանից, երբ աշակերտների յուրացրած լեզվական նյութը տալիս է այդ հնարավորությունը.

Օրինակ վերցնենք This is a cat նախադասությունը

T. black

P. This is a black cat.

This is a book.

T. English

P. This is an English book.

T. German

P. This is a German book

I see a pen

T. on the desk

P. I see a pen on the desk.

T. two

P. I see two pens on the desk.

Մենախոսական հմտությունների ձևավորումանը նպաստում է նկարների, ֆիլմերի օգտագործումը: Առաջին աստիճանում աշակերտներն ասում են մեկական նախադասություն, ելնելով ցուցադրված իրադրությունից: Օրինակ ուսուցման միջին աստիճանում ցուցադրվում է մի խաչմերուկ: Աշակերտներն ասում են մեկական նախադասություն նեղնելով այս իրադրությունից:

P, This is a street crossing.

P2. A young man is crossing the street.

P3. He mustn't cross the street because the traffic lights are red.

P4 . Some young men and women are buying newspapers.

P5. Some cars are crossing the street because the traffic-lights are green.

P6. There is a big grocer's shop at the corner

P7. Some people are going in and some are coming out of the shop

Ուսուցման տարբեր աստիճաններում կարելի է ցուցադրել բազմապիսի իրադրություններ կամ առաջարկել տարբեր խնդիրներ՝ կապված ուսումնական թեմաների հետ:

Անշուշտ չպետք է անտեսվի տեքստերի վերապատմումը: Վերապատմելու համար անհրաժեշտ է կատարել որևէ պայմանի փոփոխություն, որը կմղի աշակերտին ինչ-որ չափով ինքնուրույն մտածողական և մտքի արտահայտման աշխատանքի: Օրինակ.

T. Retell the text. 1) You are one of the farmer's sons.

2) You are the farmer..

Նման խնդիրների լուծումը աշակերտներին մղում է մտքի որոշակի փոփոխությամբ գտնելու օտար լեզվով այն արտահայելու միջոցները, մի երևույթ, որ նման լինելով բնական հաղորդակցման պայմաններին, նպաստում է մենախոսական հմտությունների զարգացմանը:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Օտար լեզուների դպրոցական ծրագիրը որոշակի պահանջներ է ներկայացնում երկխոսության ուսուցմանը: Աշակերտների երկխոսական հմտությունները դասարանից-դասարան պետք է աճեն, ընդլայնվեն ու կատարելագործվեն, որպեսզի աշակերտները կարողանան զրուցել դպրոցական թեմաների շուրջ: Զրույցի ընթացքում նա պետք է կարողանա ինֆորմացիա հաղորդել և հարցերի միջոցով նաև ստանալ, հաստատել, ժխտել, համաձայնվել, գնահատել, իր վերաբերմունքը ցույց տալ զրույցի ընթացքում շոշափվող զանազան հարցերի, երևույթների ու դեպքերի նկատմամբ:

Երկխոսությունը հաղորդակցման ձև է, որի ընթացքում երկու կամ ավելի խոսակիցներ փոխանակում են միմյանց փոխապայմանավորող արտահայտություններ:

Երկխոսության մեջ փոխադարձաբար կապված արտահայտությունները կոչվում են ռեպլիկները:

Ռեպլիկը չպետք է նույնացնել նախադասության հետ, այն կարող է ներառել մեկ կամ ավել նախադասություններ: Պատասխան ռեպլիկները կարող են կրճատ ձևով արտահայտվել, նույնիսկ մինչև մեկ բառ.

When did you meet him?

- Two hours ago.

Where do you live?

In Yerevan.

Երկխոսությունն ունի իր յուրահատկությունները, որոնց հիման վրա անհրաժեշտ է կատարել վարժությունների մի այնպիսի ամբողջություն, որն ապահովի աշակերտի երկխոսական հմտության ձևավորումը, հնարավորություն տա նրան զրուցել իր սովորած օտար լեզվով: Մեթոդական գրականության մեջ՝ նշվում են երկխոսության հետևյալ առանձնահատկությունները:

1. Երկխոսությունը հնարավոր չէ պլանավորել. այն կախված է խոսակիցներից, որոնց արտահայտած ռեպլիկները փոխապայմանավորում են մեկը մյուսին: Յուրաքանչյուր նոր արտահայտություն պայմանավորված է իրադրությամբ կամ նախորդ արտահայտությամբ:

2. Երկխոսությունը իրադրական է, այդ պատճառով նրա բովանդակությունը հնարավոր է հասկանալ միայն այն իրադրության հաշվառման հիման վրա, որում նա ստեղծվում է :Իրադրությունը կարող է լինել արտալեզվական կամ կոնստեքստային:

3. Երկխոսությունն ունի զգացմունքային երանգավորում: Զրուցելիս ի հայտ են գալիս խոսողների ապրումները, հույզերը, որոնք էլ պահանջում են յուրահատուկ հնչերանգ և բառային ու քերականական միջոցներ:

Երկխոսության մեջ հիմնականը ռեպլիկների փոխանակումն է, որոնք խիստ բազմազան են, ռեպլիկ հարց, ռեպլիկ պատասխան, ռեպլիկ հաստատում, ռեպլիկ-ժիտում, պեպլիկ-խնդրանք, ռեպլիկ-հրավեր և այլն:

Երկխոսական հմտություններ զարգացնելու համար դպրոցական ուսուցման մեջ կիրառվող հարց-պատասխան վարժությունները կատարվում են հիմնականում ուսուցիչ-աշակերտ և երբեմն նաև աշակերտ-աշակերտ կապի մեջ:

Երկխոսության ուսուցման հիմքում պետք է դնել իմաստային, կառուցվածքային փոխադարձ կապ իրադրական պայմանավորվածություն ունեցող երկխոսական միասնությունները: Սակայն երկխոսական միասնության մեջ փոխադարձ կապ ունեցող ռեպլիկների հարաբերությունը բազմազան է: Միասնությունը սովորաբար բաղկացած է խոսակցության մղող, խթանող և նրան ռեակցիա հանդիսացող ռեպլիկներից: Կենդանի հաղորդակցման մեջ այս ռեպլիկների բնույթը խիստ բազմապիսի է:

Կենդանի զրույցի ընթացքում խոսակիցները հաճախ հայտնում են շնորհակալություն, վրդովմունք, զարմանք, հիացմունք, համաձայնություն, բարեմաղթանք և այլն: Նրանք արտահայտում են նաև իրենց վերաբերմունքը

խնդրո առարկա փաստերի նկատմամբ: Այդ պատճառով էլ աշակերտները պետք է յուրացնեն մի շարք պատրաստի ֆրազներ. ինչպես
thank you, you're welcome, don't mention awfully sorry, with pleasure, how nice, good luck, I think, I'm afraid, as for me, by all means և այլն:

Երկխոսական միասնությունների ուսուցումը պետք է սկսել ամենապարզ հարց-պատասխան միասնությունից և հաջորդաբար բարդացնել, ներառելով վերոհիշյալ բոլոր տեսակի ռեպլիկներ պարունակող միասնությունները: Արտաբերվող ռեպլիկների հնչերանգի ճշտությունը երբեք չպետք է վրիպի ուսուցչի ուշադրությունից:

Աշակերտին պետք չէ առաջարկել վերացական խնդիրներ, ինչպես օրինակ՝ հարցեր տվեք նկարի շուրջ և պատասխանեք: Նկարների շուրջ կարելի է բազմապիսի հարցեր տալ, որոշակի խնդիր դնելով աշակերտի առջև, անհրաժեշտ է ճիշտ ուղղություն տալ նրան:

Երկխոսության ուսուցման մեջ նման եղանակների վարժությունների կիրառումը ռացիոնալ ու արդյունավետ է դարձնում ուսուցման պրոցեսը: Աշակերտները ձեռք են բերում երկխոսական տարբեր միասնությունները գրույցի ընթացքում օգտագործելու հմտություն: Դրանով իսկ 8-9 դասարաններում հնարավոր է դառնում դպրոցական թեմաների շուրջ աշակերտների ազատ գրուցելու հմտության զարգացումը և դպրոցական ծրագրի բանավոր խոսքի պահանջների իրականացումը:

Եզրակացություն

Օտար լեզվով հաղորդակցվելու կարողությունը օգնում է աշակերտին հաջողությունների հասնել ոչ միայն ուսման մեջ, այլև կյանքի այլևային տարբեր իրադարձություններում: Ուստի անհրաժեշտ է մեծ պատասխանատվությամբ վերաբերվել բանավոր խոսքի դասավանդման և աշակերտների համար ստեղծել կենդանի, աշխույժ զրույցի տրամադրող իրավիճակներ, որոնք կապահովեն ակտիվ և հետաքրքիր դաս: Որպեսզի աշակերտներն առավելագույն օգուտ ստանան դասից և ավելի ազատ հաղորդակցվեն միմյանց հետ, անհրաժեշտ է նրանց մեջ սերմանել դրական վերաբերմունք լեզվի նկատմամբ, նվազագույնի հասցնել նրանց վախերն ու բարդությունը և ամեն կերպ քաջալերել աշակերտների մեջ հաղորդակցությունը :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Մ.Քեչիշյան Անգլերեն բանավոր խոսքի ուսուցում 1981թ
2. С.Л. Рубинштейн. К психологии речи